26/02/2024թ.

ՀՀ Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանին

Հարգելի տիկին Ավանեսյան

Վերջին շրջանում «Հետք»-ը պարբերաբար ահազանգեր է ստանում քաղաքացիներից, որոնք դժգոհում են, որ բժիշկների նշանակած կոնկրետ դեղերը դեղատներում չեն գտնում, ծանր հիվանդությունների համար նշանակված դեղերը գնելու համար բժիշկներն ուղղորդում են կոնկրետ դեղատներ: Պացիենտները դժգոհում են, որ այդ դեղատները շատ դեպքերում դրամարկղային կտրոն չեն տրամադրում, դեղի տուփերի վրա դրոշմապիտակներ չկան, ինչը մտավախություն ու կասկածներ է առաջացնում դեղի որակի վերաբերյալ:
Պացիենտները դիմել են «Հետք»-ին՝ խնդրելով հետաքննել՝ որքանո՞վ են իրենց մտահոգությունները հիմնավոր և կարո՞ղ են շարունակել վստահել դեղատներին՝ ձեռք բերելու նշանակված դեղերը: «Հետք»-ի լրագրողները բողոքների հետքերով փետրվարի 22-ին եւ 23-ին գնացել են նշված դեղատներ, կատարել գնումներ: Մասնավորապես՝

1. «Ֆարմա լայֆ» դեղատնային ցանցի՝ Մետրոպոլիտենի «Երիտասարդական» կայարանի դիմաց գտնվող «ՍԱՍ» սուպերմարկետում գտնվող մասնաճյուղից գնել ենք «Ռեդուկսին» դեղի 20 դեղապատիճ: Դեղի տուփի վրա փակցված դրոշմապիտակի վերծանված տվյալներից պարզվում է, որ ներմուծողը դրոշմապիտակների էլեկտրոնային գրանցման համակարգում մուտքագրել է ոչ դեղի համար նախատեսված տվյալներ. դեղի արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳԱԱ) կոդի (3004) փոխարեն նշված է չփաթեթավորված վիտամինների կոդ (2936): Ապրանքատեսակն էլ արտացոլված է ոչ որպես դեղ, այլ վիտամին: Թեև այն վիտամին չէ, այլ դեղատոմսով բացթողնման ենթակա դեղ: Դեղի օգտագործման հրահանգում նկարագրված է, որ այն, ազդելով կենտրոնական նյարդային համակարգի վրա, հագեցվածության զգացում է առաջացնում. ուղղված է ճարպակալման դեմ, օգտագործվում է ծայրահեղ դեպքերում, երբ բուժման այլ տարբերակ բացակայում է: Դեղի օգտագործման հրահանգի կողմնակի ազդեցությունների բաժնում նշված է, որ այն կարող է առաջացնել հոգեկան խանգարումներ, մասնավորապես՝ փսիխոզ, սուիցիդալ (ինքնասպանության) մղումներ, մոլագարություն:Դրոշմապիտակի վերծանված այլ տվյալներից պարզվում է, որ ներմուծողն է «Իմման ֆարմ» կազմակերպությունը՝գրանցված Տավուշի մարզի Ոսկեպար գյուղի 3-րդ փողոցի 4-րդ փակուղի 6 հասցեում: Դեղատան տրամադրած դրամարկղային կտրոնի վրա բացակայում են դեղի անվանումը և արտաքին տնտեսական գործունեության (ԱՏԳ) կոդը:
2. «Մարկ ֆարմ» դեղատնից գնել են 2 անվանում հակաուռուցքային դեղ՝ «Էպիրուբիցին» 50մգ և «Գեմցիտաբին» 1000մգ: Դեղատունն Աբովյան փողոցի վրա է: Աշխատակցուհին ասաց, որ եթե կտրոն ենք ուզում, գեղչ անել չի կարող: Երկու դեղի վրա էլ բացակայում են պարտադիր փակցման ենթակա դրոշմապիտակները:
3. «ԱԲԱ-ՖԱՐՄ»-ի «Աննա Բաղեյան» մասնաճյուղից գնել ենք հակաուռուցքային բուժման սխեմաներում օգտագործվող հակափսխումային դեղ՝ «Էմենդ»՝ թուրքական արտադրության: Սկզբում կտրոն չեն տրամադրել: Պահանջելուց հետո կտրոնը տրամադրել են : Դեղի վրա բացակայում է դրոշմապիտակը: Դեղատունը գտնվում է Ուլնեցի փողոցի վրա:

4. «Նուռնե Եղիազարյան» դեղատնից գնել ենք թուրքական արտադրության «Դիպրոպան» հորմոն: Դրա դիմաց մեզ տրամադրել են
« Ֆլոստերոն» դեղի կտրոն: Դեղի վրա բացակայում է դրոշմապիտակը:
5. «Մարկ Ֆարմ» դեղատնից հաջորդ օրը՝փետրվարի 23-ին, գնել ենք «Ցանուվյա» և «Նովորապիդ» շաքարային դիաբետի դեղերը: Այս անգամ դրա դիմաց մեզ կտրոն չեն տրամադրել՝ պատճառաբանելով, որ հարկային դաշտում դեղը գրանցված չէ: Առաջարկել են մեկ այլ դեղի կտրոն տրամադրել Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գտնվող իրենց մասնաճյուղից, որի վրա, սակայն, նշված չի լինելու դեղամիջոցի անվանումը: Դեղերը թուրքական արտադրության են:
6. Տիգրան Մեծ «Գրին Լեյն» դեղատնից գնել ենք «Լանտուս» դեղի 3 գրիչ: «Լանտուսը» թուրքական արտադրության էր, որի համար մեզ չէին կարողանում կտրոն տրամադրել, փոխարենը «Ցանումետ» դեղի կտրոն տվեցին:
7. «36.6» «Արգոֆարմ» դեղատնային ցանցից ձեռք ենք բերել «Վոլտարեն» 50մգ, «Սիրդալուդ» 2մգ, «Սիրդալուդ» 4մգ և «Կլաֆորան» դեղերը: Դրանք դրոշմապիտակավորված են, դրամարկղային կտրոն տրամադրել են, սակայն դեղերը գրանցված չեն ՀՀ-ում:

«Հետքն» արդեն դիմել է ՀՀ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին՝ ներկայացված դեպքերից յուրաքանչյուրի վերաբերյալ պարզաբանում ստանալու՝ ինչպե՞ս է հնարավոր եղել չդրոշմավորված, սխալ դրոշմավորված կամ ՀՀ-ում չգրանցված դեղերի ազատ իրացումը:

Որպես դեղերի շրջանառության ոլորտում կառավարության քաղաքականությունն իրականացնող լիազոր մարմին՝ խնդրում ենք պարզաբանել, թե ի՞նչն է հանգեցրել դեղերի մանրածախ իրացման ոլորտում նման խնդիրների:

Կանխավ շնորհակալություն,

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի նախագահ,
«Հետք» թերթի խմբագիր՝
Էդիկ Բաղդասարյան